



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Շենգավիթ բժշկական կենտրոնի
Գլխավոր տնօրեն Ա.Ուռումյան

«8» սեպտեմբերի 2025թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ԺԴ .00.12 – «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված

ՄԱՐԻԱ ԴԱՎԻԹԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ

«ԱՏԱՄ-ՊԱՐՕԴՈՆՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՎԱՐԱԿԻ ՕՋԱԽԻ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵԼՔԻ ՎՐԱ»

թեմայով ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքի արդիականությունը. Հղի կանանց մոտ ստոմատոլոգիական հիվանդությունները արդիական խնդիր են հանդիսանում, քանի որ հղիությունը կարող է խորացնել առկա խնդիրները և նպաստել նոր ռիսկերի առաջացմանը: Բժշկական վիճակագրության համաձայն՝ հղիության ֆիզիոլոգիական ընթացքում ատամների կարիեսի տարածվածությունը աճել է մինչև 91.4%, իսկ պարոդոնտալ հիվանդություններինը՝ հասնելով 90%-ի: Ժամանակին չախտորոշելու և չբուժվելու դեպքում կարող են բացասական հետևանքներ ունենալ ինչպես մոր առողջության, այնպես էլ պտղի զարգացման համար: Այդ պաթոլոգիաների զարգացման գործընթացում առանցքային դեր են խաղում բակտերիաները, առաջացնելով են ատամի էմալի ապահանքայնացում, լնդերի բորբոքում և պարոդոնտալ հյուսվածքների քայքայում: Հղի կանանց մոտ ստոմատոլոգիական խնդիրները ոչ միայն բժշկական, այլև սոցիալական խնդիր են, որոնք պահանջում են ուշադրություն և ժամանակին լուծումներ, պատճառային գործոնների բացահայտումը և դրանց կորեկցիոն կապը: Հղիության ընթացքում ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելումը և բուժումը ոչ

միայն պահպանում են մոր առողջությունը, այլև նպաստում են հղիության հաջող ընթացքին և առողջ երեխայի ծննդին:

Ժամանակակից բժշկագիտության մեթոդաբանության առանցքային մոտեցումներից մեկը հանդիսանում է համակցված ախտաբանական պրոցեսների պատճառահետևանքային փոխկապակցվածության ուսումնասիրությունը: Այս տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում պարօդոնտի բորբոքային հիվանդությունների ազդեցությունը հղիության ընթացքի ու ելքի վրա՝ հատկապես վաղաժամ ծննդաբերությունների ու անհաս ծնունդների տեսանկյունից:

Պարօդոնտի հիվանդության ախտորոշումն ինքնին կարող է վաղաժամ մարկեր հանդիսանալ հղիության բարդությունների ռիսկի տեսակետից: լնդակուսի հեղուկի տարբեր բիոմարկերների բարձրացված կամ նվազված կոնցենտրացիաները կապված են հղիության բարդությունների բարձր ռիսկի հետ: Մի կողմից բացահայտ փաստ պետք է ընդունել վաղաժամկետ ծննդաբերությունների և պարօդոնտի ախտածին որոշ մանրէների հավանական տրանսլոկացիայի միջև կապը, սակայն, մյուս կողմից, հարց է առաջանում, թե որքանո՞վ է այս հարցում կարևորվում ծննդկանի մոտ պարօդոնտի ախտաբանության առկայությունը:

Վերոնշյալի հիման վրա, այս աշխատանքում իրականացված Մարիա Հակոբյանի գիտական հետազոտության թեման, նպատակն ու խնդիրները արդիական են թե՛ գիտական, թե՛ գործնական առումով:

Աշխատանքի գիտական նորույթը: Առաջին անգամ հեղինակի կողմից կատարվել է հղի կնոջ օրգանիզմի էնդոգեն ինտոքսիկացիայի ինտեգրալային լեյկոցիտային ինդեքսների փոխհարաբերությունների որոշումն որպես առաջնային բիոմարկեր պարօդոնտի հիվանդությունների ախտորոշման համար; իրականացվել է պարօդոնտի ախտաբանական գրպանների պարունակության ու հարպտոլային հեղուկի մանրէաբանական ուսումնասիրության արդյունքների համադրում ու համեմատական վերլուծություն վաղաժամկետ և ժամկետային ծննդաբերությունների դեպքում:

Ատենախոսության նորարամոծությունն է՝ օգտագործել բերանի խոռոչի մանրէաբանական հետազոտություններն ու լեյկոցիտային ինդեքսները՝

որպես հղիության ընթացքում քրոնիկական բորբոքման պոտենցյալ մարկերներ, որոնք կարող են կիրառվել ռիսկերի գնահատման վաղաժամ մեթոդաբանության մեջ:

Կիրառական նշանակությունը: Ատենախոսության հետազոտության արդյունքներն ունեն կարևոր նշանակություն գործնական առողջապահության համար: Բերանի խոռոչի քրոնիկական վարակային օջախի առկայության գնահատումը հնարավորություն է տալիս կանխորոշելու դրա ազդեցությունը հղիության ելքի վրա: Օրգանիզմի էնդոգեն ինտոքսիկացիայի ինտեգրալային լեյկոցիտային ցուցանիշների որոշումը ու պարօդոնտի ախտաբանական գրպանների և ամնիոտիկ հեղուկի պարունակության մանրէաբանական հետազոտության արդյունքներն որոշակի ճշտությամբ նպաստում են վաղաժամ ծննդաբերությունների առաջացման ռիսկային խմբերի կանխորոշմանը:

Հետազոտության արդյունքները ներդրված են «Հայր և որդի Անանյաններ» ստոմատոլոգիական կենտրոնի, Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի աշխատանքային գործունեության մեջ, ինչպես նաև ԵՊԲՀ մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի ուսումնական գործընթացում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունն ունի ավանդական կառուցվածք, ներկայացված է համակարգչային տպագրության 110 էջով, բաղկացած է ներածությունից, գրականության ակնարկից, հետազոտության նյութը և մեթոդները գլխից, սեփական հետազոտության արդյունքների երկու գլուխներից, եզրակացությունից, եզրահանգումներից, գործնական առաջարկություններից, 145 աղբյուրներ պարունակող գրականության ցանկից, որտեղ ներգրավված են 4 ուսական և 141 անգլալեզու հեղինակների աշխատանքներ, և մեկ հավելվածից: Աշխատանքը նկարագարված է 17 աղյուսակով և 6 նկարով:

Ներկայացված նյութի կլինիկական բնութագիրը և օգտագործված մեթոդները ցույց են տալիս, որ հետազոտությունն իրականացվել է մեծ թվով մասնակիցների և դիտարկումների հիման վրա՝ օգտագործելով ժամանակակից հետազոտական մեթոդներ, ինչը թույլ է տալիս լիարժեք մոտենալ նպատակին հասնելուն և ստանալ հավաստի տվյալներ:

324 հղիների մոտ իրականացված նախնական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կարիեսի տարածվածությունն ընդհանուր առմամբ գտնվել շատ բարձր մակարդակի վրա՝ կազմելով 99.3 %: Կարիեսի ինտենսիվության ցուցանիշն, ըստ ԱՀԿ-ի սանդղակի, գտնվում է միջին ինտենսիվության մակարդակի վրա ($Y_{AL}=9.32$): Բավական հետաքրքիր արդյունքներ են ստացվել նաև ԿԱՀ ինդեքսի բաղկացուցիչների առանձնացված դիտարկման ժամանակ: Մասնավորապես, պարզվել է, որ ընտրանքի երիտասարդ տարիքային խումբը (19-25 տ.) աչքի է ընկնում կարիեսի ԿԱՀ ցուցանիշի կառուցվածքում կարիեսի ու դրա բարդությունների մեծ տեսակարար մասնաբաժնով՝ շուրջ 59.9 %: Իր հերթին, պարօդոնտի հյուսվածքների հիվանդությունների տարածվածության ու դրանց կլինիկական առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հետազոտվածների ընտրանքում պարօդոնտի հյուսվածքների ախտաբանություն հայտնաբերվել է ավելի քան 98.4 % դեպքերում համաձայն CPI ցուցանիշի: Պաշտպանության ներկայացված գիտական դրույթները տրամաբանորեն կառուցված են և հիմնված են ստացված նյութի օբյեկտիվ վերլուծության վրա՝ հաշվի առնելով ուսումնասիրվող հարցի վերաբերյալ ժամանակակից գիտական տեղեկատվությունը: Ատենախոսությունում ներկայացված եզրակացությունները հիմնավորված են, բխում են ստացված արդյունքներից և պարունակում են կոնկրետ թվային տվյալներ:

Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ հարցեր չեն առաջացել:

Սեղմագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են սեղմագրում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարիա Դավիթի Հակոբյանի «Ատամ-պարօդոնտային համալիրի քրոնիկական վարակի օջախի ազդեցությունը հղիության ելքի վրա» թեմայով ԺԴ .00.12 – «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, արդիական թեմայով իրականացված գիտական աշխատանք է, որում առաջարկվում են

նոր մոտեցումներ, որոնց արդյունավետությունը հիմնավորվել է մի շարք հետազոտությունների արդյունքներով, կարելի է կիրառել գործնական առողջապահության և ստոմատոլոգիայի ոլորտում: Ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ պահանջներին, իսկ ինքը՝ հեղինակը, արժանի է հայցվող կոչմանը:

Աշխատանքը քննակրվել և հավանության է արժանացել «Շենգավիթ» Բժշկական Կենտրոնի դիմաձևոտային վիրաբուժության և ԲԿԱ հիվանդությունների բաժանմունքի 2025թ. սեպտեմբերի 8-ի գիտական խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 731/1):

Նիստի նախագահ՝ «Շենգավիթ» Բժշկական Կենտրոնի գործադիր տնօրեն՝ Բ.Գ.Թ., դոց. Դ.Ա.Մխիթարյան:

Ներկա էին՝ Բ.Գ.Թ., դոց. Ռ.Վարդանյանը, Բ.Գ.Թ., դոց. Ս.Շահբազյանը, Բ.Գ.Թ., դոց. Գ.Ռ.Քոչարյանը, Բ.Գ.Թ., դոց. Ա.Ամրոյանը, Վ.Ավետյանը, Լ.Լ. Գասպարյանը, Ի.Գ. Ռաֆայելյան, Գ.Շահսուվարյանը:

Նիստի նախագահ՝

«Շենգավիթ» Բժշկական Կենտրոնի գործադիր տնօրեն, Բ.Գ.Թ., դոց. Դ.Ա.Մխիթարյան

«Շենգավիթ» Բժշկական Կենտրոնի գործադիր տնօրեն, Բ.Գ.Թ., դոց. Դ.Ա.Մխիթարյանի ստորագրությունը հավաստում եմ

«Շենգավիթ» Բժշկական Կենտրոնի կադրերի բաժնի պետ Շ.Մկրտչյան

